

ՎԵՆԱՐԱՆՈՒՄ



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՎԵՂԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

(2 հոկտեմբերի 1977 թ., կիրակի)

Ձերդ Գերազնորհություն, սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս, Գոհություն ենք տալիս բարին Աստծուն, որ այսօր երջանկությունը ունենք սուրբ Էջմիածնում ողջունելու ներկայությունը Ձերդ Գերազնորհության, Քենթրբերիի և համայն Անգլիայի արքեպիսկոպոսիդ, և ձեր շքախմբի հարգարժան անդամներին:

Այս պահին Մեզ հետ միասին Ձեզ ողջունում են հայ եկեղեցու նվիրապետության բարձրաստիճան ներկայացուցիչները Հայաստանից և արտասահմանից, ի գլուխ ունենալով Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսը: Գրեթե ամբողջ Հայաստանյայց եկեղեցին այստեղ է՝ Ձեզ և ձեր մեծ եկեղեցուն ներկայացնելու իր սերը, իր հարգանքը, իր ջերմագին բարի մաղթանքները:

Մենք բոլորս խորապես գիտակցում ենք, թե պատմական է Ձեր այս այցելությունը և նշանակալից պիտի մնա հայ եկեղեցու ու ժողովրդի համար մեր օրերին և գալիք ժամանակներին: Ավելի քան մեկ դարի անցյալ ունեն աստվածահաճո հարաբերությունները մեր երկու եկեղեցիների միջև, հարաբերություններ, որոնք սկիզբ են առել Երուսաղեմի սուրբ Տեղյաց օրհնության ներքև ու զարգացել Մայր Աթոռ ս. Էջմիածնի գահակալների եղբայրական սիրո արտահայտություններով ու կապերով:

Կամենում ենք հատկապես հիշել պատմական նշանակություն ունեցող նամակները՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի, ուղղդյալ Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Թեյթին 1877 թվականին, և Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի Տևիտոսն արքեպիսկոպոսին 1904 թվականին ուղղյալ, երկու նամակներն էլ կապված Թուրքիայի հայոց ճակատագրի հետ:

Մենք հույժ երջանիկ ենք, որ Մեզ բախտը վիճակվեց բազմաթիվ անգամներ այցի գալու Ձեր Աթոռը ի Քենթրբերի և Լամբեր-Պալաս ի Լոնդոն և ողջագործելու Ձեզ և Ձեզ նախորդող երկու գերաշնորհ արքեպիսկոպոսների հետ, ամեն անգամ ապրելով հոգեկան մխիթարության անփոխարինելի պահեր: Ենթահակալ ենք ձեր եկեղեցուն, անգլիկան մեծ եկեղեցուն, այս բոլորի համար:

Այժմ Մենք շատ ուրախ ենք Ձեր այցելության համար սուրբ Էջմիածին, բազմադարյան կենտրոնը Հայաստանյայց սուաքելական եկեղեցու, որի հոգևոր հիմքերը խարսխված են ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս սուաքելների քարոզության ու նահատակության ավանդությանց և Գ դարի սկզբին՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի ավետարանական հաղթական գործունեության վեմի վրա, որով հայ ժողովուրդը իր սիրտը բացեց Քրիստոսին, ընդունեց ճշմարիտ հավատքը և հավատարիմ մնաց նրան մինչև այսօր, հաճախ իր մարմնի նահատակության իսկ գնով: Այսօրվա հայոց կաթողիկոսը, 130-րդ հաջորդը սուրբ Գրիգոր Լուսավորչի, Իր խոնարհ ուժերով աշխատում է քսաներկու տարիներից ի վեր Իր պարտքը կատարել Աստուծո և Մայր եկեղեցու հանդեպ, իբրև մեր ժամանակների հայ եկեղեցու գլուխ: Պատասխանատվության զգացումով տոգորված՝ աշխատում ենք զորացնել մեր Մայր եկեղեցին և ծաղկեցնել սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռը, աշխատում ենք օրավոր ընդարձակել՝ հայ ժողովրդի հոգևոր շինությունը նվիրված մեր առաքելությունը Սովետական Հայաստանում և սփյուռքում, անմիջական գործակցությամբ մեր նվիրապետական Աթոռների, թեմակալ առաջնորդների և եկեղեցական կազմակերպությունների:

Հայ եկեղեցին կարելի է նկատել այսօր վերածնված մի եկեղեցի, իր ժողովրդի և իր նորաստեղծ մայր հայրենիքի հետ միատեղ: Մեր ողբերգական պատմությունից հնչյունի է, թե ԺԱ դարում, հայ պետության կործանումից հետո, տկարացավ նաև հայ եկեղեցին, որ հայրենի հողի վրա կարողացավ գոյատևել ի զին զարհուրելի դժվարությունների և նվաստացումների, միշտ հպաժված, հաճախ նահատակված, բաժանելով տառապանքները ստրկացված իր ժողովրդի: Այս եղավ ճակատագիրը մեր եկեղեցու և սուրբ Էջմիածնի դարեր շարունակ, մինչև մեր դարի սկիզբները, երբ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցավ մեր պատմության մեծագույն ողբերգությունը, բնաջնջումը Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, մեր դարի առաջին ցեղասպանությունը, գործադրված Օսմանյան կառավարության կողմից: Արևելյան Հայաստանը կոտորածից ազատվեց 1918-ին, հրաշքի համագոր իրադարձությանց հետևանքով, իսկ 1920-ին, վերջապես փրկության ու խաղաղության ափին հասավ սովետական հայկական պետության հաստատումով, որս ժողովրդի օգնությամբ, այնպիսի մի պահի, երբ Հայաստանը և իր եկեղեցին, լքված բոլոր այլ պետություններից, գտնվում էին վերջնական բնաջնջման անդունդի առջև:

Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ իր ողբերգական անցյալը, չի կարող մոռանալ իր նահատակներին, չի կարող մոռանալ Օսմանյան Կայսրության 1915 թվին կազմակերպած ցեղասպանությունը, որին զոհ գնացին մոտ երկու միլիոն հայ մարդիկ, կանաք ու երեխաներ: Մեր օրերին մանավանդ, սփյուռքի տարածքի վրա ապրող հայերը, Մերձավոր Արևելքից մինչև Ամերիկա, հետզհետե այնպիսիպ հուզումով միասնաբար հանդես են գալիս արդար պահանջով, որ միջազգային ատյանների առաջ դատապարտվեն մեր դարի բոլոր ցեղասպանությունները և ազգությունների դեմ



ՄԱՅՐ ՏԱԾԱՌՈՒՑ ՂԵՌԻ ՎԵՂԱՐԱՆ

գործված ոճիրները, այդ թվում նաև 1915 թվի հալոց ցեղասպանությունը: Մեր քրիստոնեական խիղճը և Մեր հայրապետական պարտքի գիտակցությունը թելադրում է Մեզ Մեր ձայնը միացնել մեր հավատացյալների աղերսին և այսօր դիմել նաև Ձերդ Գերաշնորհության և ձեր մեծ եկեղեցուն, որ Ձեր բարձր դիրքերից Ձեր հեղինակավոր խոսքը ասեք ի պաշտպանություն հայ ժողովրդի արդար պահանջին, որ միջազգային ճանաչում ստանա հալոց ցեղասպանությունը իբրև պատմական տխուր եղելություն և դատապարտվի այն աշխարհի ստաշ:

Հայ ժողովուրդը և հայ եկեղեցին արդարություն են հայցում աշխարհից, արդարություն են հայցում քաղաքակիրթ մարդկությունից, և աղոթում են, որ հետ այսու մեր երկրագնդի վրա ոչ մի տեղ, ոչ մի ժողովրդի դեմ նման ոճիրներ չգործվեն, որ ամեն ազգություն մեծ թե փոքր, այս արևի տակ ապրի խաղաղ ու անվտանգ, ազատորեն տնօրինելով իր ճակատագիրը և իր նպաստը բերելով մարդկային կյանքի հառաջդիմության ու երջանիկ գոյակցության:

Այս պատմական ուրվագիծը անհրաժեշտ նկատեցինք ներկայացնել Ձեզ, ցույց տալու համար, թե հայ եկեղեցու ճակատագիրը անբաժան կերպով միշտ կապված է եղել հայ ժողովրդի և հայ պետության ճակատագրի հետ: Անտեսել այս ճշմարտությունը, պիտի նշանակեր չհասկանալ հայ եկեղեցին, չհասկանալ հայերի հոգեբանությունը, չհասկանալ սուրբ Էջմիածնի առաքելությունը մեր ազգի արդի կյանքում:

Այսօր, մեր երկրում, ազգային պետականության պայմաններում ստեղծված է երջանիկ իրավիճակ, որ հետզհետե պաշտառանում է ահա ավելի քան կես դարից ի վեր: Արարատի ստորոտին հայ ժողովուրդը, հազար տարիներից ի վեր նման ապահով ու խաղաղ, նման նյութական վերաշինության ու ազգային մշակութային զարգացման շրջան չէր ապրել:

Հայրենական վերածնունդի մեր դարաշրջանում, Հայաստանի սրտի վրա բարձրացած սուրբ Էջմիածինը, շարունակում է կանգուն և անասան մնալ իբրև գերազույց խորհրդանիշը և երաշխիքը հայկական քրիստոնեական հավատքի, նրա վավերականության և հավերժության, որ ավելի ու ավելի ծավալում է իր կրոնական և բարոյական առաքելությունը Սովետական Հայաստանում և արտասահմանում բնակվող հայ ազգի կյանքում: Մենք հավատում ենք հայ եկեղեցու և սուրբ Էջմիածնի կենսունակությանն ու առաքելությանը, որովհետև հավատում ենք Քրիստոսի Ավետարանի այժմեությանը մեր օրերում: Սովետական Հայաստանում, Մեր գահակալության տարիների ընթացքում ձեռք բերած Մեր փորձառությունը մանավանդ, ամրապնդում է Մեր այս համոզումը: Եվ Մենք գոհ ենք Մեր գործունեության արդյունքներից: Գոհ ենք նաև մեր հայրենի սովետական պետության լայնախոհ ու բարյացակամ վերաբերմունքից: Մեր երկրում բավարար չափով ստեղծված են իրավական և գործնական պայմաններ, որով եկեղեցին կարողանում է իր բուն նպատակին ծառայել, և հավատացյալ ժողովուրդը ազատորեն իր հոգու մխիթարությունը և սնունդը ստանալ: Խղճի ազատությունը, եկեղեցական համայնքների գործունեությունը, հավատացյալների հոգևոր կարիքների բավարարումը և հարգանքը դեպի կրոնական զգացումները, ապահովված են ոչ միայն սովետական սահմանադրությամբ ու օրենքներով, այլև գործնապես դրսևորվում են հանրային կյանքում, փոխադարձ հանդուրժող ու հարգալից վերաբերմունքով հավատացյալ և ոչ հավատացյալ քաղաքացիների միջև:

Մեր համոզումով, հաստատ մնալով հանդերձ մեր քրիստոնեական գաղափարախոսության հիմքերի վրա, ուղիղ չէր լինի, ոչ էլ օգտակար եկեղեցու համար, հակադրվել ու հակամարտ դիրք որդեգրել արդի գիտության նվաճումների և պատմականորեն զարգացող ընկերային-քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ: Մարդկային մտքի ու զգացումների աշխարհում, քրիստոնեությունը և մարքսիզմը կարող են միատեղ գոյատևել ու զարգանալ, միևնույնն է իրար հետ համաձայնվելով կամ ոչ:

Ուշագրավ է, որ վերջերս Սովետական Միության բոլոր ազգային հանրապետություններում լույս տեսան հատուկ կանոնադրություններ, կրոնական համայնքների կազմակերպման և նոր եկեղեցիներ բացվելու վերաբերյալ, որով ճանաչվում են ու ճշտվում նրանց գործունեության իրավական պայմանները: Այս նոր օրենսդրությունը Մենք համարում ենք մի նոր կարևոր քայլ դեպի բնականացում և օրինականացում, պետության և եկեղեցու հարաբերությունների զարգացման ճանապարհին մեր երկրում:

Ձերդ Գերաշնորհություն,

Հայաստանյայց առաքելական եկեղեցին ուրախ է, որ գործոն կերպով իր մասնակցությունն է բերում քրիստոնեական համաշխարհային միութենական շարժմանը, թե՛ իբրև անդամ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և թե՛ իր առանձին հարաբերություններով ու գործակցությամբ քույր եկեղեցիների հետ: Մենք հավատում ենք Քրիստոսի անունով գործող եկեղեցիների միության իդեալին և համոզված ենք, որ ապագային պիտի բանաձևվեն հարմարագույն սկզբունքներ ու կանոններ, իրականացնելու միության ավետարանական պատգամը, պահպանումովը ամեն մի պատմական եկեղեցու ավանդությանց, դավանաբանական մտածողության ու ինքնավար ղեկավարության, իրավասությանց սահմանների ճշտիվ պահպանումով: Եվ արդեն իսկ հայ եկեղեցին Քրիստոսի սիրո՝ մեջ ինքնիրեն միացած է զգում Արևելքի ու Արևմուտքի պատմական եկեղեցիների հետ՝ սուրբ Ավետարանով, սուրբ Երրորդության դավանությամբ, սուրբ Մկրտության խորհրդով, հոգիների փրկության հույսով, այլև մեր օրերի աշխարհին Քրիստոսի լույսը և խաղաղությունը բաշխելու առաքելությամբ: Այս ճշմարտությանց լույսի ներքև Մենք տեսնում ենք ու գնահատում սիրո հարաբերությունները Հայաստանյայց եկեղեցու և անգլիկան պատմական մեծ եկեղեցու միջև, հարաբերություններ, որոնք ցանկանում ենք ավելի ու ավելի սերտացնել ու խորացնել սուրբ Հոգու ներգործությամբ:

Մենք այսօր պարտք ենք զգում նաև Մեր եղբայրական շնորհակալությունը հայտնել Ձերդ Գերաշնորհությանը և գերապատիվ Լոնդոնի եպիսկոպոսին, այն հույժ բարյացական վերաբերմունքի և եղբայրական օգնության համար, որ ցուցաբերում էք Անգլիայում հայ եկեղեցիների, Մեր պատվիրակի և մեր հավատացյալ ժողովրդի կրոնական կարիքների նկատմամբ: Թող Տերը օրհնի մեր երկու եկեղեցիների եղբայրությունը: Թող Տերը օրհնի մեր բոլորի ջանքերը՝ իր կամքը կատարելու մեր եկեղեցիների միության և գործակցության ճանապարհի վրա:

Ձերդ Գերաշնորհություն,

Եկեղեցիների միության ոգու և գործակցելու ցանկության կարևոր արտահայտություններից մեկն ենք համարում միատեղ աղոթքը և կազմակերպված միատեղ աշխատանքը ի խնդիր կայուն խաղաղության պաշտպանման մարդկային աշխարհում: Սուրբ գրական աստվածային պատգամը՝ «մի սպանանեք» կարծում ենք, թե ամենապիմանական հրամայականն է մեր

օրերում: Պատերազմ՝ երբեք, ոչ մի տեղ, ոչ ոքի դեմ: «Ըստաղաղութիւն հե-
նաւորաց, խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն ամենեցուն»:

Աշխարհի բոլոր եկեղեցիները, բոլոր կրօնները թող միացնեն իրենց
աղոթքները և ճիգերը, ու իրենց խաղաղարար ձայնը լսելի դարձնեն բոլոր
պետություններին, դադարեցնելու սպառազինության մրցավազքը, դադա-
րեցնելու ատոմային և նեյտրոնյան ռումբերի արտադրությունն ու փորձար-
կումները և ի վերջո բոլոր տեսակի պատերազմական զենքերի ոչնչացումը,
միջազգային համաձայնություններով: Մեր աշխարհում այսօր, անխտիր բո-
լոր ազգերի գերագույն սպասումն ու իղձն է՝ պաշտպանությունը կյանքի,
խաղաղության ու արդարության:

Եվ կարծում ենք, թե մանավանդ, մեր՝ հոգևորականներին սեպտեմ-
պարտքն է խաղաղության առաքյալներ լինել մեր օրերի աշխարհում: Կգա
մի օր, երբ երկնային դատաստանի առաջ մեզանից ամեն մեկին հարց պի-
տի տրվի՝ «երկրի վրա ի՞նչ արեցիր դու խաղաղության ի խնդիր»: Մի՞թե
մարդկությունը պիտի չկարողանա իր գոյատևումը ապահովել այս երկրա-
գրնդի վրա: Մի՞թե գիտության և տեխնիկայի նվաճումները պիտի ծառայեն
մարդկության բնաջնջումին: Մի՞թե Աստված իզուր տեղ աշխարհ առաքեց՝
խաղաղության և սիրո առաքյալ Իր Որդուն:

Սիրեցյալ եղբայրներ Մեր, հալոց բազմաշարչար վկա՝ սուրբ Գրիգորի
գահից, Մենք հրավիրում ենք ձեզ բոլորիդ մնալ լավատես ու համբերա-
տար, հավատքով աներեր, որ Փրկիչը մեր Հիսուս Քրիստոս Իր անբավելի
ողորմությամբ ու անիմանալի զօրությամբ օգնության պիտի հասնի՝ աշխար-
հակործան նոր մի պատերազմի սարսափի ներքև տառապող մեր օրերի
մարդկությանը:

Ձերդ Գերաշնորհություն,

Ահավասիկ այս խոհերով ու մաղթանքներով Մենք վերստին Մեր
ուրախությունն ենք հայտնում Ձեզ ողջունելու սիրով ի Քրիստոս:

Այսօր մեր աղոթքները թող միատեղ երկինք բարձրանան քաղցրա-
բույր խունկի նման և Աստված թող օրհնի մեր երկու եկեղեցիները և մեր
այս պատմական հանդիպումը այստեղ սուրբ Էջմիածնում:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղու-
թեամբ, առանելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հոռմ. ԺԵ 18).
ամեն:

